ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հունիսի 25-ից 27-ը Ռուսաստանի Դաշնության Վերին Լարսի անցակետ ՀՀ ՊԵԿ Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության աշխատակիցների գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

1) Ղամբարյան Արտաշես, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետ
2) Մնացականյան Տիգրան, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետի տեղակալ
3) Ավետիսյան Հայկ, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետի տեղակալ
4) Հարությունյան Արմեն, ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, Վերին Լարսի անցակետ, 2024 թվականի հունիսի 25-ից 27-ը

3. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Քննարկել երկու երկրների միջև տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության

հետ կապված գործառնությունների իրականացման ընթացքում երկուստեք հետաքրքրություն և կարևորություն ներկայացնող հարցեր, իրականացնել ցամաքային անցման կետերի մաքսային մարմինների աշխատանքների կազմակերպման փորձի փոխանակում:
Իրականացվել են քննարկումներ, կարծիքների փոխանակում:
Հանդիպման աշխատանքային լեզուն ռուսերենն էր:

5. Քննարկված թեմաները՝

Հանդիպման ժամանակ մանրամասն քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների կարգավիճակի որոշման և հաստատման ժամանակ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրության պահանջների պահպանման անհրաժեշտության, մաքսային մարմիններին ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների ճշտության և հավաստիության ստուգման վերաբերյալ,
2) Մաքսային հսկողության ընթացքում մաքսային հսկողության ապահովման միջոցների (այդ թվում՝ ռենտգեն տեսազննման համակարգերի) կիրառման արդյունքների մասին օպերատիվ տեղեկատվության փոխանակման վերաբերյալ,
3) Մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների անօրինական տեղափոխում իրականացրած ֆիզիկական և իրավաբանական անձանց բացահայտման, մաքսային հսկողության տեսանկյունից ռիսկային համարվող գործընթացների շրջանակի հստակեցման, բացահայտված դեպքերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, իրավական փոխգործակցության վերաբերյալ,
4) Ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ իրականացվող մաքսային հսկողության և բացթողման իրավակիրառական պրակտիկայի վերաբերյալ,
5) Երկու երկրների միջև փոխադրվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և տրանսպորտային միջոցների տարանցման ընթացքում ի հայտ եկող խնդիրների, դրանց հրատապ լուծումների, մաքսային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ հսկողության ուժեղացման հարցերի վերաբերյալ,
6) Ղազախստանի Հանրապետությունից և Ղրղզստանի Հանրապետությունից ՀՀ տեղափոխվող և ՌԴ Հյուսիսային Օսեթիայի մաքսային մարմիններում «մաքսային

տարանցում» մաքսային ընթացակարգով ձակերպվող ապրանքների փաստաթղթային հսկողության և բացթողման հարցերի վերաբերյալ,

7) Երկու երկրների սահմանային մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման օպերատիվ շուրջօրյա կապի ապահովման, տվյալների արագ փոխանակման վերաբերյալ,

8) Հայկական համարանիշներով և գրանցման վկայականներով ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ ՌԴ մաքսային մարմինների կողմից իրականացվող հսկողության, այդպիսի տրանսպորտային միջոցների մասին ՀՀ մաքսային մարմինների մոտ առկա տեղեկատվության փոխանակման հարցերի վերաբերյալ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ ՊԵԿ պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետ Արտաշես Ղամբարյանը և ՌԴ ԴՄԾ Հյուսիսկովկասյան մաքսային վարչության պետի առաջին տեղակալ Դմիտրի Շտենբերգը հանդիպմանը քննարկեցին օրակարգում ներառված հարցերը:

Օրակարգի հարցերի վերաբերյալ հանդիպման բոլոր մասնակիցների միջև իրականացվեց կարծիքների փոխանակում: Հանդիպմանը մասնակցեց նաև ՌԴ-ում ՀՀ դեսպանատան մաքսային կցորդ Վահան Հակոբյանը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքներով որոշվեց երկու երկրների շահագրգիռ մաքսային ստորաբաժանումների ղեկավարների միջև տեղեկատվության փոխանակման և ընթացիկ հարցերի քննարկման նպատակով պարբերաբար իրականացնել քննարկումներ, ուժեղացնել հսկողությունը մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության ընթացքում օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Ձեռք բերվեց պայմանավորվածություն սահմանային մաքսային մարմինների ղեկավարների միջև աշխատանքային շփումները ակտիվացնելու վերաբերյալ:

8" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Պարբերաբար իրականացնել հանդիպումներ և քննարկումներ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ, ինչպես նաև՝ տվյալների և տեղեկատվության փոխանակում օրակարգի հարցերի և դրանց լուծումների վերաբերյալ: Որպես ակնկալվող արդյունք՝ բարձրացնել երկու երկրների միջև փոխադրվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ իրականացվող մաքսային հսկողության արդյունավետությունը, կրճատել մաքսային ձևակերպումների վրա ծախսվող ժամանակը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Արտաշես Ղամբարյան

Տիգրան Մնացականյան

Հայկ Ավետիսյան

Արմեն Հարությունյան

01.07.2024թ.